

## ԳԱՂՏՆԻՔԸ ՈՐՊԵՏ ՍՈՑԻԱԼ-ԻՐԱՎԱԿԱՆ ԵՐԵՎՈՒՅՑ

### Վարազդատ Սուքիասյան

*ՀՀ Վճռաբեկ դատարանի քրեական պալատի դատավորի օգնական,  
ՀՀ իրավունքի և քաղաքականության ինստիտուտի  
քրեական իրավունքի և քրեական դատավարության  
իրավունքի ամբիոնի ասպիրանտ*

Պետությունների և հասարակությունների տարբեր տիպերի սոցիալական, քաղաքական և իրավական հատկանիշները բավականին բազմաշերտ են: Դրանց շարքում որոշակի տեղ է զբաղեցնում նաև գաղտնիքը որպես սոցիալ-իրավական երևույթ: Ընդ որում, այն ներկայանում է ոչ միայն որպես տեղեկատվության սահմանափակման կառուցակարգ, այլ նաև որպես պետությունում և հասարակությունում ներթափանցող օբյեկտիվ գործընթացների արտացոլանք: Ցանկացած տոտալիտար պետության համար բնութագրական է պետական և ծառայողական գաղտնիքների ծավալի չափազանց ընդլայնումը, իսկ ժողովրդավարական պետություններին, ընդհակառակը, բնորոշ է օրենքով պահպանվող գաղտնիքների օրենսդրական մանրակրկիտ կարգավորումը<sup>1</sup>:

Աքսիոլոգիական առումով գաղտնիքը սոցիալական արժեք է, որի՝ օրենքով պահպանվածության և պաշտպանվածության պայմաններում է հնարավոր միայն տեխնոգեն հասարակությունում մարդու բնականոն կենսագործունեության ապահովումը: Ասվածը նաև հիմնավորվում է նրանով, որ հոգեբանության մեջ հանրաձանաչ է այն, որ անձի մասնավոր կյանքի վերաբերյալ տեղեկության հրապարակումը համարվում է մարդու հոգեկան անվտանգության սպառնալիքներից մեկը<sup>2</sup>:

Տեղեկության արժեքը գաղտնիքների ուսումնասիրման առումով չափազանց կարևոր ասպեկտ է: Տեղեկությունը կարող է ունենալ չնչին կարևորություն, զգալի կարևորություն, զգալի իրավիճակային կարևորություն և բովանդակային զգալի կարևորություն: Ուստի իրավագետ Ի.Վ.Բոնդարի կարծիքով՝ օրենքով պահպանվող գաղտնիքի բովանդակությունն են կազմում միայն այն տեղեկությունները, որոնք ունեն զգալի արժեք և վերաբերում են հասարակական կյանքի առավել կարևոր ոլորտներին<sup>3</sup>:

Տեղեկություն հասկացության բացահայտման համար անհրաժեշտ է անդրադառնալ վերջինիս նորմատիվային սահմանմանը, որը տրված է «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքում: Այդ օրենքի 3-րդ հոդվածի համաձայն՝ տեղեկությունը սահմանվում է, որպես *անձի, առարկայի, փաստի, հանգամանքի, իրադարձության, եղելության, երևույթի վերաբերյալ օրենսդրությամբ սահմանված կարգով ստացված և ձևավորված տվյալներ՝ անկախ դրանց տնօրինման ձևից կամ նյութական կրիչից (տեքստային, էլեկտրոնային փաստաթղթեր, ձայնագրություններ, տեսագրություններ, լուսաժապավեններ, զժագրեր, սխեմաներ, նոտաներ, քարտեզներ)*: Այս նորմատիվային սահմանման տրամաբանական պարզեցման դեպքում ստացվում է, որ տեղեկությունը տվյալ է: Այսինքն՝ նույնանում են տեղե-

<sup>1</sup> Տե՛ս **Фатьянов А.А.** Тайна и право. М. МИФИ. 1999, էջ 14:

<sup>2</sup> Տե՛ս **Ршетица С.Ю., Смолян Г.Л.** Информационно-психологическая безопасность личности // Проблемы информационно-психологической безопасности. М., 1996. էջ 21:

<sup>3</sup> Տե՛ս **Бондарь И. В.** Тайна по российскому законодательству (Проблемы теории и практики): Дис. канд. юрид. наук: Н. Новгород, 2004, էջ 16:

կությունը և տվյալը: Նման մոտեցում է առկա նաև «Անձնական տվյալների պաշտպանության մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածում, որտեղ անձնական տվյալը համարվում է *ֆիզիկական անձին վերաբերող ցանկացած տեղեկություն, որը թույլ է տալիս կամ կարող է թույլ տալ ուղղակի կամ անուղղակի կերպով նույնականացնել անձի ինքնությունը*:

Ի.Վ.Բոնդարը նշում է, որ տեղեկության և տվյալի հասկացությունները հարաբերակցվող կատեգորիաներ են, սակայն ոչ նույնական<sup>1</sup>: Մեր մոտեցումն այն է, որ կոնցեպտուալ առումով այս երկու հասկացությունների միջև տարբերությունն այնքան մեծ չէ, որ կարող է տերմինաբանական խառնաշփոթ առաջացնել իրավակիրառ պրակտիկայում կամ նույն տեսական մեկնաբանման մակարդակում: Բացի այդ, ըստ էության տեղեկությունը կարող է բացատրվել տվյալի հասկացությամբ և հակառակը, քանի որ արդի բացատրական բառարանում<sup>2</sup> նույնպես դրանք պարզաբանվում են միմյանցով:

Արդի դարաշրջանի համար տեղեկությունը համարվում է կարևոր սոցիալական ռեսուրս, որի պայմաններում գաղտնիքի պաշտպանության նշանակությունն էլ ավելի է ամրապնդվում ժողովրդավարական հասարակություններում: Հաշվի առնելով ժամանակակից հասարակական հարաբերություններում գաղտնիքիների, այդ թվում անձնական գաղտնիքների բազմազանությունը՝ կարելի է պնդել, որ գաղտնիքը որպես սոցիալական երևույթ ուղղակիորեն առնչվում է ցանկացած անհատի շահերին: Ընդ որում տվյալները, որոնք ավանդաբար պահպանվում են որպես գաղտնիք, այսօր արդեն տեղեկատվական տեխնոլոգիաների զարգացման կտրուկ տեմպի պայմաններում բարձրացնում են դրանց նկատմամբ ոչ իրավաչափ հասանելիության ռիսկերը:

Ռուս իրավագետ Ա.Ֆատյանովն իրավացիորեն նշել է, որ հատկապես արդիական են դարձել տեղեկության այնպիսի իրավաբանական հիմնարար հատկանիշները, ինչպիսիք են՝

- ոչ նյութականությունը,
- անորոշ շրջանակի անձանց մոտ տեղեկության միաժամանակյա գտնվելը,
- նյութական կրիչից տեղեկության անխզելի կապի բացակայությունը<sup>3</sup>:

Պատահական չէ, որ ներկայումս տեղեկության պաշտպանությունը համարվում է ինքնուրույն, սոցիալապես կարևոր գործունեության ոլորտ, որը, ի թիվս այլնի, ուսումնասիրվում է օրենքով պահպանվող գաղտնիքների պաշտպանության տեսանկյունից:

Գաղտնիքին՝ որպես սոցիալական երևույթի անդրադարձել են մի շարք գիտնականներ. մասնավորապես ռուս իրավագետ Յու.Ս.Պիլիպենկոն նշել է, որ գաղտնիքը միշտ ենթադրում է լռելու պարտականություն, քանի որ այն պայմանավորված է մարդկային համակեցության կանոններով: Գաղտնիության ռեժիմի խախտումը, անկախ դրա բնույթից կամ շարժառիթից, չի կարող ունենալ բարոյապես դրական գնահատական: Չհանրայնացված տեղեկությունը ստանում է գաղտնիքի կարգավիճակ այն դեպքում, երբ փոխանցվում է երրորդ անձանց կամ արտացոլվում է նյութական կրիչի վրա: Հակառակ դեպքում, երբ գաղտնիքը չի հանրայնացվել, այսինքն՝ չի փոխանցվել այլ անձանց, ապա գաղտնիքը դուրս է սոցիալական հարաբերությունների շրջանակից և համարվում է գաղտնիք միայն սուբյեկտիվ իմաստով<sup>4</sup>:

<sup>1</sup> Տե՛ս *И.В.Бондарь*, նշված աշխատությունը, էջ 25:

<sup>2</sup> Տե՛ս *Ег.Р.Угашан*, Արդի հայերենի բացատրական բառարան, հատոր 2, Երևան, Հայաստան, 1976, էջ 1458:

<sup>3</sup> Տե՛ս *Фатьянов А.А.* Обращаться с осторожностью: тайна! // Закон, 2002, N12, էջ 24:

<sup>4</sup> Տե՛ս *Пилипенко Ю.С.* Адвокатская тайна: теория и практика реализации: диссертация доктора юридических наук: Москва, 2009, էջ 35:

Սոցիոլոգիական տեսանկյունից իրավական երևույթների ուսումնասիրումը առավել հիմնավոր է դարձնում երևույթի վերաբերյալ պատկերացումները: Երբ իրավագիտությունը որևէ հասկացություն է փոխառում սոցիոլոգիայից, առաջին հերթին փորձում է այն պիտանի դարձնել իրավական օգտագործման համար<sup>1</sup>:

Իրավական երևույթների վերաբերյալ հետազոտությունների շրջանակներում անհրաժեշտ է իրավական նորմում նշված փաստական իրավիճակի վերացարկումից (abstracted factual situations) անցում կատարել սոցիալական գիտություններին: Այլ կերպ, Զ.Հոլի կարծիքով, նման մոտեցումը չի նշանակում, որ իրավունքից անցում սոցիալական գիտություններին, այլ միայն տեղի է ունենում այլ գիտությունների կոնցեպցիաների այնպիսի վերակազմավորում, որը թույլ է տալիս դրանք դիտարկել իրավական հարթության վրա<sup>2</sup>:

Այսպես, գերմանացի սոցիոլոգ Բ.Սիվերսը գաղտնիքը բնորոշում էր նախևառաջ որպես սոցիալական համակարգերում ընթացող հաղորդակցության գործոն<sup>3</sup>, իսկ Ն.Լուհմանը նշում էր, որ սոցիալական համակարգերում առկա գաղտնիքները տևող գաղտնիքներ են, քանի որ որոշակի ժամանակ հետո կորցնում են գաղտնիք լինելու իրենց հատկությունը և դառնում են հասարակ տեղեկություն<sup>4</sup>: Վերջինս կարևորում էր նաև գաղտնիքի ժամանակավոր լինելու բնույթը: Վ.Ստոկը գաղտնիքը բնորոշում էր որպես հասարակական բարոյականություն<sup>5</sup>: Հայտնի սոցիոլոգներ Ի.Գոֆմանի և Ի.Ալթմանի կարծիքով՝ գաղտնիքը ոչ այլ ինչ է, քան սոցիալական երևույթ: Վերջիններս պնդում էին, որ գաղտնիքը կարևոր է ոչ միայն անհատի ազատ զարգացման, այլ նաև՝ ընդհանրապես հասարակության բնականոն էվոլյուցիայի համար<sup>6</sup>:

Գաղտնիքը որպես սոցիալական երևույթ բնորոշող վերը նշված հեղինակների աշխատություններում ընդհանրական է այն մոտեցումը, որ անհատները սոցիալական փոխհարաբերություններում հաճախ են ունենում գաղտնիության ողջամիտ ակնկալիք:

Մասնավոր կյանքի գաղտնիության ողջամիտ ակնկալիքի (reasonable expectation of privacy) դոկտրինն առաջին անգամ ամրագրվել է ԱՄՆ գերագույն դատարանի *Katz v. United States*<sup>7</sup> գործով վճռում, որտեղ դատարանը, անդրադառնալով հեռախոսային խոսակցությունների գաղտնալսման իրավաչափությանը, նշել է, որ անգամ հանրային վայրերում գտնվող հեռախոսակապից օգտվելու դեպքում անձն ունի գաղտնիության ողջամիտ ակնկալիք: Ընդ որում, գնահատելու համար ողջամիտ ակնկալիքը ԱՄՆ գերագույն դատարանն ընդգծել է, որ գաղտնիության ողջամիտ ակնկալիքի թեստն ունի երկու պայման: Առաջին պայմանն այն է, որ անձը պետք է փաստացի ակնկալի (գիտակցի), որ իր հեռախոսային խոսակցությունը չի գաղտնալսվում, իսկ երկրորդ պայմանն այն է, որ հասարակությունում այդ ակնկալիքը պետք է համարվի ողջամիտ:

<sup>1</sup> Տե՛ս *R.Cotterrell*, *Law, Culture and Society: Legal Ideas in the Mirror of Social Theory* (Law, Justice and Power) Paperback – 28 Sept. 2006. Էջ 55:

<sup>2</sup> Տե՛ս *Hall J.* Some Basic Questions Regarding Legal Classification for Professional and Scientific Purposes // *Journal of legal education*. 1953. Vol. 5. Էջ 341:

<sup>3</sup> Տե՛ս *B.Sievers* *Geheimnis und Geheimhaltung in sozialen Systemen*: Springer Fachmedien Wiesbaden 1974. Էջ 36:

<sup>4</sup> Տե՛ս *Luhmann* *Allgemeines Modell organisierter Sozialsysteme*, Manuskript, Bielefeld. 1970 Էջ 22:

<sup>5</sup> Տե՛ս *W.Stok* *Zur vgl. auch Geheimhaltung aufgrund von Mißverständnissen und Mißtrauen* (1929), Էջ 53:

<sup>6</sup> Տե՛ս *B.Roessler, D.Mokrosinska*, *Social Dimensions of Privacy: Interdisciplinary Perspectives*. Cambridge University Press (2015). Էջ 53:

<sup>7</sup> Տե՛ս *Katz v. United States*, U.S. Supreme Court 389 U.S. 347 (1967) վճիռը:

Իրավունքի և հասարակության<sup>1</sup> վերաբերյալ սոցիոլոգիական աշխատություններում գիտնականները հաճախ անդրադառնում են մասնավոր կյանքի գաղտնիության նկատմամբ քրեադատավարական միջամտության հարցերին: Ուշադրության է արժանի հատկապես Ա.Սթինչկոմբի աշխատությունները, որոնցում վերջինս նշում է, որ մարդկանց առօրյա կյանքի մեծ մասը կենտրոնացված է ոչ մեծ սոցիալական համակարգերում (դրանք են ընտանիքը, դպրոցը, աշխատավայրը և այլն), որոնք ունեն սեփական նորմեր, նպատակներ և տեղակայում: Այդ սոցիալական համակարգերի սահմաններին չմիջամտելը կարևոր նշանակություն ունի դրանց բնականոն զարգացման համար: Եթե պետության ներկայացուցիչները անպատեհ ներխուժեն սոցիալական համակարգեր, ապա դրանք կկորցնեն իրենց ինքնուրույնությունը (private autonomy) և հնարավորություն չեն ունեն ազատ զարգանալու<sup>2</sup>:

Հետաքրքրական է Ա.Սթինչկոմբի այն պնդումը, որ սոցիալական համակարգերի հիմնական, փաստացի սահմաններ են այնպիսի հասարակ իրեր, ինչպիսիք են՝ դռները, պատերը, պատուհանները, որոնց իրավաբանական պաշտպանության ներքո հասկացվում է, որ ոչ մեծ սոցիալական համակարգերը, որոնք օրինական հիմքերով տիրապետում են որոշակի տարածքի, կարող են ապահովել շարունակական (continuous) և հայեցողական (discretionary) վերահսկողություն սոցիալական համակարգի սահմանների նկատմամբ<sup>3</sup>:

Հարկ է ընդգծել, որ գաղտնիքի կազմավորման նպատակը դրա բացահայտման, հրապարակման, ինչպես նաև երրորդ անձանց հասանելիության արդյունքում առաջացող բացասական հետևանքների կանխումն է: Հետևապես գաղտնիքի առթիվ ֆիզիկական անձանց միջև ծագող հարաբերությունները կարգավորվում են առավելապես սոցիալական նորմերով: Սոցիալական նորմերն իրավունքի տեսության մեջ ընդունված է համարել որպես հասարակության, նրա անդամների և դրանց միավորումների գործունեության և սոցիալական փոխհամագործակցության կազմակերպման գիտակցված կամային բնույթի վարքագծի ընդհանուր չափորոշիչներ<sup>4</sup>:

Վերոգրյալի հաշվառմամբ կարծում ենք, որ գաղտնիքը որպես սոցիալական երևույթ նախևառաջ սոցիալական համակարգերի ներսում, ինչպես նաև սոցիալական համակարգերի միջև հաղորդակցության միջոցի ձև է: Ինքնին գաղտնիքի սոցիալական գործառույթը մեր մոտեցմամբ այն է, որ այն ըստ սոցիալական անհրաժեշտության իրականացնում է տեղեկության սելեկտիվ որակում (selektive Qualifizierung): Ասվածը կարելի է հասկանալ հետևյալ կերպ. պետությունը՝ որպես սոցիալական բարդ համակարգ, հաստատում է այն տեղեկությունների շրջանակը, որոնք կարող են առանց սահմանափակման օգտագործվել համակարգի սուբյեկտների կողմից: Իսկ այն տեղեկությունները, որոնց շրջանառությունը պետությունը ցանկանում է սահմանափակել, ապա դրանց նկատմամբ ըստ սոցիալական անհրաժեշտության իրականացնում է ընտրողական որակում՝ կազմելով սոցիալական

<sup>1</sup> Նշենք, որ սոցիալական գիտությունների Law and Society ուղղությունն առաջացել է ԱՄՆ-ում 1966 թվականին, այնուհետև իր իմաստավորումն է գտել Գերմանիայում՝ «Zeitschrift fuer Rechtssoziologie» և Իտալիայում՝ «Sociologia del Diritto»:

<sup>2</sup> Տե՛ս **L.A. Stinchcombe** Institutions of Privacy in the Determination of Police Administrative Practice, by, in: The American Journal of Sociology, Vol. 69. No 2 (Sep., 1963). էջ 150-151:

<sup>3</sup> Տե՛ս **L.A. Stinchcombe**, նշված աշխատությունը, էջ 151:

<sup>4</sup> Տե՛ս Պետության և իրավունքի տեսություն: Ուսումնական ձեռնարկ/ Հեղ. խումբ; Գիտ. խմբ.՝ **Ա.Ղանդարյան, Ս.Մուրադյան**, -3-րդ լրամշակված հրատ. - Եր.: «Լուսարաց հրատարակչատուն», 2018. էջ 268: Տե՛ս նաև mutatis mutandis, **Марченко, М.Н.** Теория государства и права: учебник / 2-е изд., перераб. и доп. - М.: Проспект, 2014. էջ 450: **Матузов Н.И., Малько А.В.** Теория государства и права: учебник / 4-е изд., испр. и доп.- М.: Изд. дом «Дело», 2013, էջ 211:

համակարգի կողմից պահպանվող գաղտնիք:

Գաղտնիքի երևույթը ուսումնասիրելիս անհրաժեշտ է գիտակցել, որ գաղտնիքի բովանդակությունը կազմող տեղեկությունը իրավակարգավորման բարդ և բազմաասպեկտ օբյեկտ է, ուստի գաղտնիքի մասին համակողմանի պատկերացում կազմելու համար անհրաժեշտ է ներկայացնել այն որպես իրավական երևույթ:

Իրավաբան գիտնականների կողմից գաղտնիքի իրավական բնորոշման հարցում չկա միասնական մոտեցում: Այսպես՝ գաղտնիքը դիտվում է որպես իրավական երևույթ<sup>1</sup>, իրավական կատեգորիա<sup>2</sup> և իրավական ինստիտուտ<sup>3</sup>:

Յու.Ս.Պիլիպենկոն նշում է, որ իրավունքը, լինելով մշակույթի նորմատիվային ֆենոմեն, գաղտնիքի առթիվ ծագած հարաբերությունները միջնորդավորելով, կազմավորում է այն որպես իրավական երևույթ, որն էլ իր հերթին արտացոլվում է գործող օրենսդրության մեջ:

Ս.Ի.Պարշուկովի կարծիքով՝ գաղտնիքն իր յուրահատուկ բնույթով համարվում է ընդհանուր իրավական կատեգորիա, որն օգտագործվում է իրավունքի բոլոր ճյուղերում և արտացոլվում օրենքով պահպանվող տեղեկությունների վերաբերյալ օրենսդրական ակտերում:

Ըստ Ի.Վ.Սմոլկովայի՝ գաղտնիքի ինստիտուտը իրավական նորմերի համակարգ է, որը կարգավորում է կոնֆիդենցիալ տեղեկության պաշտպանության առթիվ ծագող իրավահարաբերությունները: Մեկ այլ աշխատության մեջ Ի.Սմոլկովան նշում է, որ գաղտնիքը համարվում է սոցիալ-իրավական ինստիտուտ<sup>4</sup>:

Վերջին մոտեցումը չի համընկնում սոցիալ-իրավական ինստիտուտի էությանը այն պատճառաբանությամբ, որ սոցիալական ինստիտուտները մարդկանց կազմակերպված միավորումներ են, որոնք իրականացնում են սոցիալապես կարևոր որոշակի գործառույթներ<sup>5</sup>: Սոցիալական ինստիտուտի բավականին դինամիկ տարատեսակ է սոցիալ-իրավական ինստիտուտը, որը, բացի սոցիալական գործառույթներից, իրականացնում է նաև իրավական գործառույթներ: Օրինակ՝ այդպիսի սոցիալ-իրավական ինստիտուտներ են համարվում իրավապահ մարմինները, օրենսդիր մարմինները, դատական մարմինները, որոնք, բացի սոցիալական գործառույթներից, ունեն իրենց հատուկ իրավական գործառույթները: Ուստի Ի.Վ.Սմոլկովայի վերը նշված մոտեցմամբ բովանդակային առումով գաղտնիքը բնութագրվում է ոչ թե որպես սոցիալ-իրավական ինստիտուտ, այլ սոցիալ-իրավական երևույթ:

Անզլիացի հանրահայտ իրավագետ, փիլիսոփա Ի.Բենտամը բավականին խիստ է արտահայտվել քրեական դատավարությունում արտոնությունների և գաղտնիքների առկայության վերաբերյալ՝ նշելով, որ գաղտնիքը դատավարությունում չարիք<sup>6</sup> է, սակայն 20-րդ դարի սկզբին Արևմտյան Եվրոպայում լայն տարածում գտավ գերմանացի իրավագետ Է.Բեյլինգի առաջարկած դոկտրինը, ըստ որի՝ քրեական դատավարությունում ապացուցման գործընթացը պետք է իրականացվի որոշակի սահմանափակումներով, այսպես կոչված՝ «ապացուցման արգելքներով», որոնց թվին է դասվում նաև քրեական գործերով վարույթի ընթացքում պետական և

<sup>1</sup> Տե՛ս *Ю.С. Пилипенко*, նշված աշխատությունը էջ 35:

<sup>2</sup> Տե՛ս *М.И. Паршуков*. Вестник УрФО № 4(22) / 2016, էջ 52: Տե՛ս նաև *mutatis mutandis*, **Գ.Հակոբյան**, Բժշկական գաղտնիքի քրեաիրավական պաշտպանությունը. թեկնածուական ատենախոսություն, ԵՊՀ, 2018թ. էջ 13:

<sup>3</sup> Տե՛ս *И.В. Смолькова*, Актуальные проблемы охраняемых федеральным законом тайн в российском уголовном судопроизводстве: монография. -М.: Юрлитинформ, 2014. - էջ 21:

<sup>4</sup> Տե՛ս *И.В. Смолькова*, Проблемы охраняемой законом тайны в уголовном процессе: Дис. д-ра юрид. наук: 12.00.09: Иркутск, 1998, էջ 24:

<sup>5</sup> Տե՛ս *В.А.Беседина*, Социально-правовые институты современного российского общества: особенности формирования и развития: диссертация доктора социологических наук: Санкт-Петербург, 2005. էջեր 129 և 137:

<sup>6</sup> Տե՛ս *Бентам И.О.*, Судостроительстве. СПб., 1860, էջ 106:

ծառայողական գաղտնիքների պահպանումը<sup>1</sup>: Օրենքով պահպանվող գաղտնիքների պաշտպանության վերաբերյալ բազմաթիվ գիտական աշխատություններ հրատարակած Ի.Վ.Սմոլկովայի կարծիքով՝ հենց այդ իրավական դոկտրինով պայմանավորվեց տարբեր տեսակի գաղտնիքների պաշտպանության համար մի շարք իրավական մեխանիզմների ի հայտ գալը<sup>2</sup>:

1995 թվականի հուլիսի 5-ին համաժողովրդական հանրաքվեով ընդունվեց Հայաստանի Հանրապետության Սահմանադրությունը, որի 20-րդ հոդվածը երաշխավորում էր յուրաքանչյուր մարդու անձնական և ընտանեկան կյանքի իրավունքը, նամակագրության, հեռախոսային խոսակցությունների, փոստային, հեռագրական և այլ հաղորդումների գաղտնիության իրավունքը, ինչպես նաև սահմանում էր մարդու անձնական և ընտանեկան կյանքի մասին տեղեկություններ ապօրինի հավաքելու, պահելու, օգտագործելու և տարածելու արգելքը: Այս Սահմանադրությամբ, ինչպես նաև 2005 թվականի փոփոխություններով Սահմանադրությամբ չեն տարբերակվում մասնավոր կյանքի գաղտնիության իրավունքը և տվյալների պաշտպանության իրավունքը:

Հարկ է նկատել, որ մասնավոր կյանքի գաղտնիության իրավունքի և տվյալների պաշտպանության իրավունքի տարբերակումը (distinction) սահմանադրական մակարդակով առաջին անգամ ամրագրվեց 2015 թվականի փոփոխություններով Սահմանադրությամբ: Այստեղ ամրագրված մարդու իրավունքներն արտացոլում են, մասնավորապես, Եվրոպական միության հիմնական իրավունքների խարտիայի, Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին կոնվենցիայի և դրա հիման վրա Մարդու իրավունքների եվրոպական դատարանի ձևավորած պրակտիկայի, Մարդու իրավունքների միջազգային դաշնագրերի դրույթները, ինչպես նաև բազմաթիվ առաջադիմական կարգավորումներ, որոնք տեղ են գտել տարբեր երկրների սահմանադրություններում<sup>3</sup>: Հայաստանի Հանրապետությունում 2015 թվականի դեկտեմբերի 6-ի սահմանադրական փոփոխություններով առանձին հոդվածներով ամրագրվեցին բնակարանի անձեռնմխելիությունը (31-րդ հոդված), մասնավոր և ընտանեկան կյանքի, պատվի ու բարի համբավի անձեռնմխելիությունը (32-րդ հոդված), հաղորդակցության ազատությունը և գաղտնիությունը (33-րդ հոդված) և անձնական տվյալների պաշտպանությունը (34-րդ հոդված):

Նշված իրավունքների տարբերակումն ունի մեթոդական կարևոր նշանակություն, քանի որ դրանց բովանդակությունը կազմող տվյալները (տեղեկությունները) չեն համընկնում իրենց զործառության շահանքահատկություններով, ինչպես նաև դրանց պաշտպանության մեխանիզմներով:

Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիայի (այսուհետ նաև Եվրոպական կոնվենցիա) 8-րդ հոդվածի համաձայն՝ «1. Յուրաքանչյուր ոք ունի իր անձնական ու ընտանեկան կյանքի, բնակարանի և նամակագրության նկատմամբ հարգանքի իրավունք:

2. Չի թույլատրվում պետական մարմինների միջամտությունն այդ իրավունքի իրականացմանը, բացառությամբ այն դեպքերի, երբ դա նախատեսված է օրենքով և անհրաժեշտ է ժողովրդավարական հասարակությունում՝ ի շահ պետական անվտանգության, հասարակական կարգի կամ երկրի տնտեսական բարեկեցության, ինչպես նաև անկարգությունների կամ հանցագործությունների կանխման, առողջության կամ բարոյականության պաշտպանության կամ այլ անձանց իրավունքների

<sup>1</sup> Տե՛ս *Филимонов Б.А.* Институт запретов доказывания в уголовном процессе ФРГ //Вестник МГУ.Серия 11. Право. 1986. № 6. էջ 47:

<sup>2</sup> Տե՛ս *И.В. Смолькова*, նշված աշխատությունը, էջ 11:

<sup>3</sup> Տե՛ս *Վ.Պողոսյան, Ն.Սարգսյան*, Հայաստանի Հանրապետության 2015թ. խմբագրությամբ Սահմանադրությունը. Հ 247, Եր.: Տիգրան Մեծ, 2016, էջ 43:

և ազատությունների պաշտպանության նպատակով»:

Ինչպես երևում է Եվրոպական կոնվենցիայի 8-րդ հոդվածի բովանդակության ուսումնասիրությունից, այն չի պարունակում անձնական տվյալների պաշտպանության վերաբերյալ որևէ դրույթ, սակայն Մարդու իրավունքների եվրոպական դատարանի (այսուհետ նաև՝ Եվրոպական դատարան) նախադեպային իրավունքը Կոնվենցիայի 8-րդ հոդվածի ազդեցության շրջանակը տարածում է նաև անձնական տվյալների պաշտպանության հետ կապված իրավահարաբերությունների վրա: Այս կապակցությամբ Եվրոպական դատարանը նշել է, որ Կոնվենցիայի 8-րդ հոդվածի լայն կիրառումը կապված է Եվրոպայի խորհրդի «Անձնական տվյալների ավտոմատացված մշակման դեպքում անհատների պաշտպանության մասին» կոնվենցիայի հետ, որի նպատակն է ապահովել յուրաքանչյուր պետության տարածքում յուրաքանչյուր անհատի՝ անկախ նրա քաղաքացիությունից կամ բնակության վայրից, իրավունքների և հիմնարար ազատությունների, մասնավորապես նրա գաղտնիության իրավունքի նկատմամբ հարգանքը՝ իրեն առնչվող անձնական տվյալների ավտոմատացված մշակման մասով (տվյալների պաշտպանություն)<sup>1</sup>:

Եվրոպական դատարանի՝ անձնական տվյալների պաշտպանության ոլորտի վրա Կոնվենցիայի 8-րդ հոդվածի տարածման պրակտիկան քննադատվում է Եվրոպական դատարանում ներկայացուցչական առաքելությամբ հանդես եկող փաստաբանների և Եվրոպական միության արդարադատության դատարանի ներկայացուցիչների կողմից: Մասնավորապես՝ վերջիններս նշում են, որ Եվրոպական միության հիմնական իրավունքների խարտիան ի տարբերություն Կոնվենցիայի 8-րդ հոդվածի՝ տարբերակում է «մասնավոր կյանք» և «տվյալների պաշտպանություն» հասկացությունները, ինչը հիմք է հանդիսանում Եվրոպական միության արդարադատության դատարանի կողմից ձևավորել հստակ տարբերակված նախադեպային պրակտիկա<sup>2</sup>:

Իրավաբանական գրականությունում «մասնավոր կյանք» և «անձնական տվյալ» հասկացությունների հարաբերակցության շուրջ գիտնականների մոտ ձևավորվել է երեք մոտեցում:

Առաջին մոտեցման կողմնակիցները<sup>3</sup> գտնում են, որ այդ հասկացությունները հարաբերակցվում են որպես ամբողջ և մաս, որտեղ մասնավոր կյանքը ամբողջն է, իսկ անձնական տվյալը՝ մասը:

Երկրորդ մոտեցմանը հարող հեղինակների<sup>4</sup> կարծիքով՝ անձնական տվյալ հասկացությունն ավելի լայն է, քան մասնավոր կյանքի տվյալը, քանի որ անձնական տվյալները միասեռ չեն, և դրանց մեջ, բացի նույնականացնող տվյալներից, ընդգրկվում է նաև անձի բարոյական և գործնական հատկանիշների վերաբերյալ տվյալներ:

<sup>1</sup> St' u *Greuter v. the Netherlands* գործով 19.03.2002թ. որոշումը, գանգառ թիվ 40045/98:

<sup>2</sup> St' u *J.Kokott, C.Sobotta*, The distinction between privacy and data protection in the jurisprudence of the CJEU and the ECtHR, International Data Privacy Law, Volume 3, Issue 4, November 2013, էջեր 222–228:

<sup>3</sup> St' u *Յ. Ա. Цадькова*, Гарантии охраны и защиты персональных данных человека и гражданина // Конституционное и муниципальное право. 2007. № 14. *Н. И. Петрыкина*, К вопросу о конфиденциальности персональных данных // Законы России: опыт, анализ, практика. 2007, № 6.

<sup>4</sup> St' u *Е. В. Климович*. О сущности понятия «персональные данные» как конфиденциальной информации особой категории // Международные юридические чтения: материалы ежегодной международной научно-практической конференции (14 апреля 2005 г.). Омск, 2005. Ч. 2. էջ 27. *Д. М. Ветров*, Защита персональных данных и защита информации на предприятии. Некоторые спорные вопросы применения // Проблемы права. Челябинск, 2010. № 1, էջ 119:

Երրորդ տեսակետի<sup>1</sup> համաձայն՝ անձնական տվյալ և մասնավոր կյանքի տվյալ հասկացությունները բովանդակային առումով նույնական չեն, այդուհանդերձ դրանց բովանդակությունը կազմող տվյալները հաճախ խաչվում են: Մասնավոր կյանքի վերաբերյալ ամբողջ տեղեկությունն անձնավորում է մարդուն իր կողմից իրականացվող գործունեությամբ, սակայն կան անձնական տվյալներ, որոնք թելուզև նույնականացնում են անձին, սակայն հանդիսանում մասնավոր կյանքի տվյալներ չեն, օրինակ՝ անձի անունը, ազգանունը, հայրանունը, բնակության վայրը:

Մեր կարծիքով, մասնավոր կյանքի վերաբերյալ տեղեկության բովանդակությունն ավելի լայն է, քան անձնական տվյալի բովանդակությունը, քանի որ վերջինս չի ներառում անձի մասնագիտական, ծեռնարկատիրական, հասարակական և այլ գործունեությանը վերաբերող տեղեկությունները: Ընդհանուր առմամբ մասնավոր կյանքի վերաբերյալ տեղեկությունները կազմում են նաև անձի բարեկամական, ընկերական հարաբերություններն այլ անձանց հետ, անձի սոցիալական և ֆինանսական վիճակը, հայացքների և մոտեցումների, կենսակերպի վերաբերյալ տվյալները, իսկ անձնական տվյալների թվին է դասվում ֆիզիկական անձին վերաբերող ցանկացած տեղեկություն, որը թույլ է տալիս կամ կարող է թույլ տալ ուղղակի կամ անուղղակի կերպով նույնականացնել անձի ինքնությունը:

«Մասնավոր կյանք» և «անձնական տվյալ» հասկացությունների պարզաբանումից հետո առաջ քաշվող հարցադրումն այն է, թե համարվում է արդյոք անձնական տվյալը գաղտնիք: Այս հարցադրմանը պատասխանելու համար պետք է անդրադառնալ «Անձնական տվյալների պաշտպանության մասին» ՀՀ օրենքի առաջին հոդվածի 2-րդ մասին, որտեղ ամրագրված է, որ պետական և ծառայողական, բանկային, նոտարական, փաստաբանական, ապահովագրական գաղտնիք համարվող, ազգային անվտանգությանը կամ պաշտպանությանն առնչվող գործողությունների ժամանակ օգտագործվող, ինչպես նաև փողերի լվացման և ահաբեկչության դեմ պայքարի, օպերատիվ-հետախուզական գործունեության ընթացքում կամ դատավարություններում օգտագործվող անձնական տվյալների հետ կապված առանձնահատկությունները կարգավորվում են այլ օրենքներով: Նշված հոդվածի վերլուծությունից կարելի է եզրահանգել, որ անձնական տվյալն ինքնին չի համարվում գաղտնիք, սակայն որոշակի իրավահարաբերությունների հետ առնչվելուց անձնական տվյալը վերածվում է գաղտնիքի կամ դասվում է գաղտնիքի մեջ ներառված տեղեկությունների շարքին:

Այս հարցի կապակցությամբ ՀՀ արդարադատության նախարարության անձնական տվյալների պաշտպանության գործակալության 2019 թվականի հանրային հաշվետվությամբ նշվել է, որ անձնական տվյալն ինքնին գաղտնիք չէ, և անձնական տվյալների մշակման սկզբունքները և կանոնները սահմանող «Անձնական տվյալների պաշտպանության մասին» ՀՀ օրենքում անձնական տվյալները չեն նույնանում գաղտնիքի հետ (այսպես, անձնական տվյալները կարող են լինել նաև հանրամատչելի)<sup>2</sup>:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 23-րդ գլուխն ամբողջությամբ

<sup>1</sup> St' u *С. Г. Пилипенко, С. А. Федосин*, К вопросу о защите права на неприкосновенность частной жизни при обработке персональных данных // Актуальные проблемы современного государства и права: материалы Всероссийской научно-практической конференции (Саранск, 22-23 мая 2008 г.). М., 2009. էջ 73. *А. М. Лушников*, Защита персональных данных работника: сравнительно-правовой комментарий главы 14 Трудового кодекса Российской Федерации // Трудовое право. 2009. № 9.

<sup>2</sup> St' u ՀՀ արդարադատության նախարարության անձնական տվյալների պաշտպանության գործակալության 2019 թվականի հանրային հաշվետվությունը, էջ 8, հղումը՝ <http://www.justice.am/storage/uploads/2019Annual-report-2019-ATPG.pdf>:



նվիրված է գաղտնիության պահպանմանը: Նշված գլխի նորմերով ամրագրված են քրեական վարույթի շրջանակներում մասնավոր և ընտանեկան կյանքի անձեռնմխելիության, պետական, ծառայողական և առևտրային գաղտնիքների ստացման և պահպանման ընդհանուր պայմանները:

Օրենքով պահպանվող գաղտնիքների մի ստվար հատված կապված է այնպիսի իրավահարաբերությունների հետ, որոնք դուրս են քրեադատավարական գործունեությունից, դրանց իրավական կարգավորումը ապահովվում է ճյուղային օրենսդրությամբ՝ վարչական, քաղաքացիական, ընտանեկան և այլն, սակայն հատուկ տեղ է զբաղեցնում փաստաբանական գաղտնիքը, որն ունի ընդհանուր դատավարական բնույթ<sup>1</sup>, քանի որ դրա իրավական կարգավորումը ապահովվում է քրեական, վարչական և քաղաքացիական դատավարության օրենսգրքերով:

«Օրենսդրության ուսումնասիրությունը վկայում է, որ տարբեր օրենքներով ներկայումս կարգավորվում են 29 տեսակի գաղտնիքների հետ կապված իրավահարաբերություններ: Դրանց թվին են դասվում՝ պետական, ծառայողական, հարկային, ապահովագրական, բանկային, վարկային, նոտարական, մասնագիտական, առևտրային, բժշկական, նախաքննության, փաստաբանական, աուդիտորական, լրագրողական, չբացահայտված տեղեկատվությունը՝ ներառյալ արտադրության (նոու-հաու) գաղտնիքները, ինչպես նաև օրենսդրությամբ ապահովվում է նաև մասնավոր կամ ընտանեկան կյանքի, քվեարկության, խոստովանանքի, խորհրդակցական սենյակի, երեխայի որդեգրման, կտակի, նամակագրության, հեռախոսային խոսակցությունների, փոստային, հեռագրական և այլ հաղորդումների, էլեկտրոնային հաղորդակցության և Մարդու իրավունքների պաշտպանի առանձնագրույցների գաղտնիությունը:

Իհարկե օրենսդրությամբ առկա է նաև միջանձնային հարաբերությունների կոնֆիդենցիալության պահպանման այլ կառուցակարգեր, օրինակ՝ «քրեական դատավարության օրենսգրքով ապահովվում է կալանավորված անձի և օրինական ներկայացուցչի առանձին, խորհրդապահական կարգով (կոնֆիդենցիալ) տեսակցելու հնարավորությունը<sup>2</sup>:

Վերոգրյալի համատեքստում, բնորոշելով գաղտնիքը որպես սոցիալական համակարգերի ներսում, ինչպես նաև սոցիալական համակարգերի միջև հանդես եկող հաղորդակցության միջոց և ըստ սոցիալական անհրաժեշտության տեղեկության սելեկտիվ որակման գործառնություն իրականացնող երևույթ (selective Qualifizierung), այն գաղտնիության իրավական ռեժիմի պահպանման ամրագրումն է ստացել ինչպես «Սահմանադրությամբ, այնպես էլ օրենքներով, ուստի գաղտնիքն իր բովանդակային էությամբ հայտնվում է հասարակական կյանքի երկու ոլորտներում՝ սոցիալական և իրավական, որպիսի պայմաններում այն կարող է բնորոշվել որպես սոցիալ-իրավական երևույթ:

<sup>1</sup> Տե՛ս *И. В. Смолькова*, նշված աշխատությունը էջ 11:

<sup>2</sup> Այս մասին *mutatis mutandis* տե՛ս Նարեկ Խաչատրյանի գործով Վճռաբեկ դատարանի՝ 2019 թվականի սեպտեմբերի 18-ի որոշումը:

## ТАЙНА КАК СОЦИАЛЬНО-ПРАВОВОЕ ЯВЛЕНИЕ

**Варздат Сукиасян**

*Помощник судьи Уголовной палаты Кассационного суда РА,  
аспирант кафедры уголовного права и уголовно-процессуального  
права Института права и политики РАУ*

---

В статье рассматриваются социально-правовые проявления тайны. Обобщая мнения ученых, дается понятие тайны как социального явления, затем обосновывается как юридическое явление. В представленной статье особое внимание уделяется вопросу разграничения понятий «частная жизнь» и «личные данные» с учетом позиций Европейского Суда по правам человека и Суда Европейского Союза.

## PRIVACY AS A SOCIO-LEGAL PHENOMENON

**Varazdat Sukiasyan**

*Assistant to the Judge of the Criminal Chamber of the RA Cassation Court,  
PhD Student at the Chair of Criminal Law and Criminal Procedure Law  
of RAU Institute of Law and Politics*

---

The article discusses the social and legal manifestations of privacy. Summarizing the opinions of scientists, the concept of mystery is given as a social phenomenon, then it is justified as a legal phenomenon. In the presented article, special attention is paid to the issue of distinguishing between the concepts of “private life” and “personal data” taking into account the positions of the European Court of Human Rights and the Court of the European Union.

**Բանալի բառեր՝** գաղտնիք, իրավունքի սահմանափակում, դատարան, տեղեկության հասանելիություն, մասնավոր կյանք, կոնֆիդենցիալ տեղեկություն:

**Ключевые слова:** тайна, ограничение права, суд, доступ к информации, частная жизнь, конфиденциальная информация.

**Key words:** privacy, restriction of law, court, access to information, privacy, confidential information.